296

1. Աշխարհը լեցուն է բարիքներով,
Չի կշտանում աչքը, լցվում սիրտը,
Գալիքը լեցուն է տառապանքներով,
Պիտ անցնեն այս կյանքի զվարճանքները:

Հիսուսն է մեր ճամփան, մեր կյանքը,
Կշտացնում է աչքը, լցնում սիրտը,
Դե, շտապի՛ր քեզ գցել Իր գիրկը,
Որ ապահով լինի քո կյանքը:

2. Ունայն է այս կյանքը, վաղանցիկ,
Կփչանա, կանցնի ինչպես ծաղիկ,
Չի դառնա երբեք ետ կյանքը քո,
Մեկ ճամփա կա տանող մոտն Աստծո:

3. Բաց են դռները՝ տանող կյանքի,
Մի՛ խստացրու սիրտդ, մի՛ համառիր,
Փակվելու է մի օր դուռը այն,
Որ տանում է հավիտենություն: